



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի

թիվ 21

քաղ. Մոսկվա

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգի հաստատման մասին

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականությունն անցկացնելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետի իրականացման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 36-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգը:

2. Սահմանել, որ՝

մինչև սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրը չափումների մեթոդիկաների (մեթոդների) չափագիտական վկայագրումն անցկացվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

չափումների մեթոդիկաների (մեթոդների) չափագիտական վկայագրման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան տրվել են մինչև սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրը, գործում են մինչև այդ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող՝ չափումների համապատասխան մեթոդիկաների (մեթոդների) գործողության ժամկետը դադարելու օրը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սազինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի 2016 թվականի մարտի 17-ի
թիվ 21 որոշմամբ

ԿԱՐԳ

չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման

1. Սույն Կարգը մշակվել է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) եւ սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կանոնները (այսուհետ համապատասխանաբար՝ վկայագրում, մեթոդիկա, անդամ պետություններ):

2. Սույն Կարգի նպատակների համար չափումների առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ) ասելով՝ հասկացվում է չափումների այնպիսի մեթոդիկա (մեթոդ), որն անդամ պետությունում միակ իրավաբանական անձի 1 լրակազմով սարքավորմամբ իրականացվում է ամենաբարձր ճշգրտությամբ, կիրառվում է միեւնույն, այդ թվում՝ հղումային մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) օգնությամբ ստացված չափումների արդյունքների ճշտությունը գնահատելու համար, թույլ է տալիս չափումների արդյունքներն ստանալ՝ առանց միեւնույն տեսակի մեծությունների միավորների նկատմամբ չափագիտական հետեւելիության (հետագծելիության) եւ հաստատված է որպես անդամ պետությունում կիրառվող առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ):

Սույն Կարգում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) սահմանված իմաստներով:

3. Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման (օրենսդրական չափագիտության) ոլորտում կիրառվող մեթոդիկաները պարտադիր կարգով ենթակա են վկայագրման:

Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման

(օրենսդրական չափազիտության) ոլորտից դուրս կիրառվող մեթոդիկաների մասով վկայագրումն անցկացվում է կամավոր կարգով:

4. Մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է դրա համար լիազորված կազմակերպությունների կողմից՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ լիազորված կազմակերպություն):

Մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ այդ անդամ պետության տարածքում գրանցված՝ մեթոդիկայի մշակողներ հանդիսացող ցանկացած իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի կամ այն անձի դիմումի համաձայն, որի պատվերով մշակվել է մեթոդիկան (այսուհետ՝ հայտատուներ):

5. Մեթոդիկայի վկայագրման ընթացքում տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրություններ են անցկացվում լիազորված կազմակերպությունը որոշելու համար, եւ իրականացվում է չափումներին ներկայացվող չափազիտական պահանջներին մեթոդիկայի համապատասխանության հաստատում: Չափումներին ներկայացվող չափազիտական պահանջները նշվում են մեթոդիկայի մշակման տեխնիկական առաջադրանքում կամ մեթոդիկայի մշակման ելակետային պահանջներ պարունակող այլ փաստաթղթում (այսուհետ՝ տեխնիկական առաջադրանք):

Մեթոդիկայի տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների անցկացման արդյունքում սահմանվում են չափումների ստացվող արդյունքների ճշգրտության ցուցանիշները:

Մեթոդիկայի փորձարարական ուսումնասիրությունների անցկացման ժամանակ օգտագործվում են մեծությունների միավորների այնպիսի չափանմուշներ, ստանդարտ նմուշներ եւ չափումների միջոցներ, որոնց համար ապահովված է դրանց օգնությամբ ստացվող արդյունքների չափազիտական հետեւելիությունը՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ), ազգային (առաջնային) չափանմուշների եւ (կամ) մեծությունների միավորների միջազգային չափանմուշների կամ չափումների առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների) նկատմամբ:

6. Չափումներին ներկայացվող չափազիտական պահանջներին մեթոդիկայի համապատասխանության հաստատման ժամանակ՝

ա) սահմանվում է՝

մեթոդիկայի նպատակային նշանակության համապատասխանությունը չափումների օբյեկտի այն հատկություններին, որոնք կարող են ազդեցություն ունենալ չափումների արդյունքների եւ չափվող մեծությունների բնույթի վրա.

չափումների կատարման պայմանների համապատասխանությունը մեթոդիկայի կիրառման պահանջներին.

չափումների արդյունքների ճշգրտության ցուցանիշների եւ չափումների ճշգրտության ապահովման միջոցների համապատասխանությունը չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին.

չափումների արդյունքների չափագիտական հետեւելիության ապահովումն ազգային (առաջնային) չափանմուշների եւ (կամ) մեծությունների միավորների միջազգային չափանմուշների կամ չափումների առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների) նկատմամբ.

չափումների արդյունքների ներկայացման ճշտությունը.

չափումների եւ համապատասխան ընթացակարգերի կատարման վերաբերյալ պահանջների շարադրանքի ամբողջականությունը.

մեթոդիկան կանոնակարգող փաստաթղթի համապատասխանությունը չափումների մեթոդիկաների մշակման եւ ձեւակերպման միջազգային ստանդարտին եւ անդամ պետության չափումների միասնականության ապահովման տեղեկատվական ֆոնդի վարման փաստաթղթերին.

մեծությունների միավորների անվանումների եւ պայմանանշանների համապատասխանությունը Միավորների միջազգային համակարգին (ՄՀ) եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 34 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորների, այդ թվում՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) հետ դրանց հարաբերակցության ցանկին.

բ) գնահատվում է ստորեւ ներկայացվածների ճշտությունը եւ հիմնավորվածությունը՝

չափումների մոդելի.

անորոշության բյուջեի նկարագրման ժամանակ բերված տեղեկությունների կամ մեթոդիկայի մշակման ժամանակ ստացված չափումների արդյունքի սխալանքի առաջացման կառուցվածքի.

փորձարարական ուսումնասիրությունների պլանի եւ ծավալի՝ ներառյալ փորձանմուշներ վերցնելու եւ պատրաստելու մեթոդները.

մեթոդիկայի փորձարարական ուսումնասիրությունների անցկացման ժամանակ օգտագործված չափումների միջոցների, մեծությունների միավորների

չափանմուշների, ստանդարտ նմուշների, տեխնիկական միջոցների եւ նյութերի ընտրության.

մեթոդիկայի փորձարարական ուսումնասիրությունների անցկացման պայմանների ընտրության.

մեթոդիկայի փորձարարական ուսումնասիրությունների արդյունքների մշակման եղանակների եւ միջոցների՝ ներառյալ ծրագրային ապահովման ընտրությունը.

սխալանքի բնութագրերի ներկայացման եղանակների կամ անորոշության ներկայացման եղանակների ընտրության.

չափումների արդյունքների ճշգրտության ցուցանիշների հսկողության առաջարկված ընթացակարգերի ընտրության:

7. Սույն Կարգի 6-րդ կետին համապատասխան՝ մեթոդիկայի համապատասխանության հաստատման շրջանակներում կատարված աշխատանքի արդյունքները ձեւակերպվում են արձանագրությամբ (հաշվետվությամբ):

Չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին մեթոդիկայի համապատասխանությունը հաստատվելու դեպքում լիազորված կազմակերպության կողմից ձեւակերպվում է համապատասխան եզրակացություն՝ կից ներկայացնելով արձանագրությունը (հաշվետվությունը), ինչպես նաեւ տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները:

Սույն Կարգի 6-րդ կետին համապատասխան կատարված աշխատանքների արդյունքում չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին մեթոդիկայի համապատասխանությունը չհաստատվելու դեպքում լիազորված կազմակերպության կողմից ձեւակերպվում է համապատասխան եզրակացություն (հիմնավորմամբ)՝ կից ներկայացնելով արձանագրությունը (հաշվետվությունը), ինչպես նաեւ տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, որոնք ուղարկվում են հայտատուին:

8. Մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է հայտատուի եւ լիազորված կազմակերպության միջեւ կնքված պայմանագրի հիման վրա:

9. Մեթոդիկայի վկայագրման անցկացման համար հայտատուի կողմից լիազորված կազմակերպություն են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) հայտը (նշելով մեթոդիկայի անվանումը, հայտատուի մասին տեղեկությունները, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ անդամ պետությունների կողմից վկայագրումը ճանաչելու պահանջները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության

ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան).

բ) տեխնիկական առաջադրանքը.

գ) տեխնիկական առաջադրանքով նախատեսված ծավալով փաստաթղթերը.

դ) փաստաթղթի նախագիծը (փաստաթուղթը)՝ մեթոդիկայի շարադրմամբ.

ե) մեթոդիկայի փորձարարական եւ (կամ) տեսական ուսումնասիրությունների ծրագիրը եւ արդյունքները (փորձարարական ուսումնասիրությունների արձանագրությունները, սխալանքների կամ անորոշությունների փորձարարական կամ հաշվարկային գնահատման արդյունքները, ճշգրտության ցուցանիշների գնահատմանն ուղղված միջլաբորատոր եւ (կամ) ներլաբորատոր փորձարկումների ծրագիրը եւ արդյունքները), եթե դա նախատեսված է տեխնիկական առաջադրանքով:

10. Մեթոդիկայի վկայագրման անցկացման արդյունքներով հայտատուին տրվում է վկայական՝ հավելվածով սահմանված ձևի համաձայն (այսուհետ՝ վկայական):

11. Վկայականը լրացվում է ռուսերենով, էլեկտրոնային տպիչ սարքերի օգտագործմամբ եւ անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ վկայագրումն անցկացնող անդամ պետության պետական լեզվով:

Վկայականը ռուսերենով եւ անդամ պետության պետական լեզվով լրացվում է վկայականի տարբեր կողմերում՝ սույն Կարգի 14-րդ կետին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում մշակողի անվանումը եւ մեթոդիկայի մասին տեղեկությունները նշվում են լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ:

Վկայականը լրացնելու ժամանակ բառերի հապավումների օգտագործում (բացի ընդունվածներից) եւ տեքստի ուղղումներ չեն թույլատրվում:

12. Վկայականի կորստի կամ փչանալու դեպքում լիազորված կազմակերպության կողմից տրվում է այդ վկայականի կրկնօրինակը: Ընդ որում, վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է գրառում՝ «Կրկնօրինակը տրված է 20 թվականի _____-ի « _____»-ին»՝ նշելով վկայականի բնօրինակի տրման համարը եւ ամսաթիվը:

Վկայականում սխալների (վրիպակների) հայտնաբերման դեպքում թույլատրվում է դրա փոխարինումը:

13. Վկայականի բոլոր դաշտերը պետք է լրացված լինեն (վկայականի բնօրինակում դաշտերի համարակալումը բացակայում է):

14. Վկայականի մեջ նշվում են՝

ա) 1-ին դաշտում՝ 1 տողով կատարված գրառում՝

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

բ) 2-րդ դաշտում՝ լիազորված կազմակերպության ամբողջական անվանումը.

գ) 3-րդ դաշտում՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված՝ լիազորված կազմակերպության՝ վկայագրում անցկացնելու լիազորությունները հաստատող փաստաթուղթը.

դ) 4-րդ դաշտում՝ 2 տողով կատարված գրառումներ՝

1-ին տող՝ «ՎԿԱՅԱԿԱՆ».

2-րդ տող՝ «չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման մասին».

ե) 5-րդ դաշտում՝ վկայականի գրանցման 7-նիշանոց համարը եւ դրա տրման ամսաթիվը:

Վկայականի գրանցման համարը ձեւավորվում է հետեւյալ կարգով՝

առաջին եւ երկրորդ նշանները՝ անդամ պետության 2-նիշանոց տառային ծածկագիրը՝ միջազգային ISO 3166-1 ստանդարտին համապատասխան.

երրորդից հինգերորդ նշանները՝ ընթացիկ տարում ձեւակերպված վկայականի հերթական համարը, որը հաջորդաբար ձեւավորվում է տարվա սկզբից (001 համարից).

վեցերորդ եւ յոթերորդ նշանները՝ մեթոդիկայի վկայագրման տարվա թվային 2-նիշանոց ծածկագիրը (նշվում են տարվա վերջին 2 թվերը՝ 00-ից մինչեւ 99):

Վկայականի տրման ամսաթիվը նշվում է տառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ բառով, տարին՝ արաբական չորս թվով (տարվա կրճատ նշումով՝ «թ.»).

զ) 6-րդ դաշտում՝ մեթոդիկայի մասին տեղեկությունները՝ ներառյալ

մեթոդիկայի անվանումը.

չափվող մեծության անվանումը, մեծությունների սանդղակը (չափումների սանդղակը կամ չափումների միավորները).

չափումների օբյեկտը.

չափումների տիրույթը.

չափումների ճշգրտության ցուցանիշները.

վկայագրման ժամանակ չափումների արդյունքների ճշգրտության ցուցանիշների սահմանման եղանակի մասին նշումը (տեսական, փորձարարական).

է) 7-րդ դաշտում՝ մշակողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.

ը) 8-րդ դաշտում՝ փաստաթղթի անվանումը եւ նշագիրը՝ մեթոդիկայի շարադրմամբ.

թ) 11-րդ դաշտում՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված մարմինների հետ մեթոդիկայի համաձայնեցման մասին տեղեկությունները (անդամ պետության օրենսդրությամբ մեթոդիկայի համաձայնեցում նախատեսված չլինելու դեպքում կատարվում է գրառում՝ «Համաձայնեցում նախատեսված չէ»).

ժ) 12-րդ դաշտում՝ վկայականը տրամադրած լիազորված կազմակերպության ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)՝ այդ կազմակերպության կնիքով վավերացված (առկայության դեպքում).

ժա) 13-րդ դաշտում՝ վկայականի ձեւաթղթի տպագրական համարը (սերիան եւ հերթական համարը), որը դրվում է դրա պատրաստման ժամանակ:

15. Այն դեպքում, երբ գործունեության կոնկրետ ոլորտում մեթոդիկայի կիրառման համար պահանջվում է անդամ պետությունների պետական մարմինների հետ դրա համաձայնեցում, այդ համաձայնեցումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

16. Վկայագրված մեթոդիկայի մասին տեղեկությունները փոխանցվում են անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման տեղեկատվական ֆոնդ՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Մեթոդիկայում փոփոխությունների կատարումն իրականացվում է մշակողի կողմից: Մեթոդիկան՝ դրանում կատարված փոփոխություններով, ենթակա է վկայագրման՝ սույն Կարգին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ

Չափումների մեթոդիկայի (մեթոդի)
չափագիտական վկայագրման կարգի

ՁեՎ

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման
մասին վկայականի

ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1)

(2)

(չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրում անցկացնելու համար
լիազորված կազմակերպության ամբողջական անվանումը)

(3)

(չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրում անցկացնելու
լիազորությունները հաստատող փաստաթուղթ)

ՎԿԱՅԱԿԱՆ (4)

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման մասին (5)

N _____ « _____ » _____ թ.

Չափումների մեթոդիկա (մեթոդ) _____, (6)

_____ մշակված, (7)

_____ սահմանված, (8)

վկայագրված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի մարտի
17-ի թիվ 21 որոշմամբ հաստատված՝ Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական
վկայագրման կարգի պահանջներին համապատասխան: (9)

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման արդյունքում պարզվել է, որ
չափումների մեթոդիկան (մեթոդը) համապատասխանում է չափումներին ներկայացվող
չափագիտական պահանջներին: Չափումների մեթոդիկայի (մեթոդի) համաձայնեցման մասին
տեղեկություններ՝ (10)

_____ (11)

_____ Կ. Տ. _____ (12)

լիազորված կազմակերպության
ղեկավարի (լիազորված անձի)
պաշտոնը)

(ստորագրություն
ն)

Ա. Ա. Հ.

Սերիա _____ թիվ _____ (13)